



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ**

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում
Քրեական գործ թիվ 0107/01/2010թ.

Քրեական գործ թիվ 0107/01/2010թ.

Նախագահող դատավոր՝ Ն.Գրիգորյան
Դատավորներ՝ Հ.Աբրահամյան
Կ.Սաղյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԼՂՀ Գերագույն դատարանը վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝ դատավոր Ի.Կարապետյանի
դատավորներ՝ Զ.Օհանյանի
Գ.Գրիգորյանի

2010թ. հոկտեմբերի 18-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ԼՂՀ Գլխավոր դատախազ Ա.Ղարամյանի վճռաբեկ բողոքը Էրիկ Գարիի Ավանեսյանի և Վլադիմիր Էդուարդի Գրիգորյանի նկատմամբ՝ ԼՂՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով ու 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2010թ. սեպտեմբերի 3-ի որոշման դեմ,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

Նախաքննության մարմնի (ԼՂՀ ոստիկանության քննչական վարչություն) 2010թ. հունիսի 2-ի որոշմամբ Էրիկ Գարիի Ավանեսյանի և Վլադիմիր Էդուարդի Գրիգորյանի նկատմամբ հարուցվել է քրեական գործ ԼՂՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և ԼՂՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով:

2010թ. հունիսի 21-ին նախաքննության մարմնի կողմից Էրիկ Ավանեսյանը և Վլադիմիր Գրիգորյանը ձերբակալվել են որպես կասկածյալներ:

Նախաքննության մարմնի 2010թ. հունիսի 24-ի՝ որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումներով Էրիկ Ավանեսյանին և Վլադիմիր Գրիգորյանին մեղադրանք է

առաջադրվել ԼՂՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով և 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի (այսուհետ՝ առաջին աստիճանի դատարան) 2010թ. հունիսի 24-ի որոշումներով, մեղադրյալներ՝ Էրիկ Ավանեսյանի և Վլադիմիր Գրիգորյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ 1 (մեկ) ամիս ժամկետով:

Նախաքննության մարմնի կողմից 2010թ. հունիսի 29-ի որոշմամբ մեղադրյալներին առաջադրված մեղադրանքը լրացվել է խուլիգանություն կատարելու ընթացքում նրանց կողմից «Վիվառ» ՍՊ ընկերությանը 4000 դրամ գույքային վնաս պատճառելու մասով և նրանց 2010թ. հունիսի 30-ին առաջադրվել նոր մեղադրանք, մեղադրյալներից յուրաքանչյուրի մասով կայացնելով՝ որպես մեղադրյալ ներգրավելու մասին համապատասխան որոշումներ: 2010թ. հուլիսի 2-ին, քրեական գործը մեղադրական եզրակացությամբ մտել է առաջին աստիճանի դատարան:

Առաջին աստիճանի դատարանի (արագացված դատական) քննությամբ, 2010թ. հուլիսի 16-ի դատավճռով Էրիկ Ավանեսյանը և Վլադիմիր Գրիգորյանը մեղավոր են ճանաչվել ԼՂՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով և 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ու համապատասխանաբար՝ նրանց նկատմամբ նշանակված պատիժները գումարելու միջոցով, յուրաքանչյուրին վերջնական պատիժ նշանակվել ազատազրկում՝ 2 /երկու/ տարի ժամկետով և տուգանք՝ 200.000 (երկու հարյուր հազար) դրամ:

ԼՂՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ, դատարանը որոշել է ամբաստանյալներին ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան՝ 1 տարի 6 ամիս ժամկետով: Ամբաստանյալների նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ դատարանը վերացրել է և նրանց ազատ արձակել դատական նիստերի դահլիճից:

ԼՂՀ վերաքննիչ դատարանը (այսուհետ՝ վերաքննիչ դատարան) 2010թ. սեպտեմբերի 3-ի որոշմամբ մերժելով մեղադրողի վերաքննիչ բողոքը, Էրիկ Ավանեսյանի և Վլադիմիր Գրիգորյանի նկատմամբ առաջին աստիճանի դատարանի 2010թ. հուլիսի 16-ի դատավճիռը թողել է օրինական ուժի մեջ:

Նշված դատավճռի դեմ ԼՂՀ Գլխավոր դատախազ Ա. Ղարամյանը բերել է վճռաբեկ բողոք:

Վճռաբեկ բողոքին պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի հիմքեր, փաստարկները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում.

1. Բողոք բերած անձը գտնում է, որ ամբաստանյալներ՝ Է. Ավանեսյանի և Վ. Գրիգորյանի նկատմամբ նշանակված պատիժը ակնհայտ մեղմ է, չի բխում ԼՂՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներից, չի կարող ապահովել նշված օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակների իրագործումը:

Բողոք բերած անձը նշված պնդումը հիմնավորում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն ամբաստանյալների նկատմամբ կիրառելով ԼՂՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը, հաշվի չի առել կատարած արարքների հասարակական վտանգավորության բնույթն ու աստիճանը, պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքները՝ ակոնոլային հարբածության վիճակում գտնվելը: Դատարանը հաշվի է առել ու գնահատել միայն պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները:

2. Դատարանը անհիմն է կիրառել ԼՂՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը, անտեսել է նույն օրենսգրքի 10-րդ հոդվածի պահանջները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Ամբաստանյալները կատարել են ծանր և միջին ծանրության հանցագործություններ՝ ուղղված սեփականության, հասարակական կարգի և անձի դեմ, ընդ որում՝ խուլիգանությունը կատարել են խմբով, իսկ գողությունը՝ խոշոր չափերով, մուտք գործելով ու նախնական համաձայնությամբ: Դատարանը որոշում կայացնելիս, պետք է պահպաներ ԼՂՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքը:

Վերաքննիչ դատարանի որոշումը հիմնականում պարունակում է ԼՂՀ քրեական օրենսգրքի ընդհանուր մասի դրույթների տեսական մեկնաբանություններ, քան ստորադաս դատարանի հետևությունների օբյեկտիվ վերլուծություն և գնահատում:

3.Բողոք բերած անձը գտնում է, որ Գերագույն դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառման համար:

Վերը նշված հիմնավորումներով, վճռաբեկ բողոքում խնդրվում է Էրիկ Գարիի Ավանեսյանի և Վլադիմիր Էդուարդի Գրիգորյանի նկատմամբ ԼՂՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով, 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով վերաքննիչ դատարանի 2010թ. սեպտեմբերի 3-ի որոշումը՝ պատժի մասով բեկանել և փոփոխել ու ամբաստանյալներին նշանակել պատիժ ազատազրկման ձևով, քանի որ ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ և դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Գործի փաստական հանգամանքները.

Էրիկ Ավանեսյանին և Վլադիմիր Գրիգորյանին մեղադրանք է առաջադրվել այն արարքների համար, որ նրանք լինելով ոգելից խմիչքի ազդեցության տակ, 2010թ. հունիսի 21-ին, ժամը 01.40-ին, մուտք են գործել Ստեփանակերտ քաղաքի Թումանյան փողոցի թիվ 81 շենքի, թ.96 հասցեում տեղակայված «Վիվառո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության խաղատունը ու դիտավորությամբ, կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը և բացահայտ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելով հասարակության նկատմամբ, առանց էական պատճառի, բարձրաձայն անվայել հայհոյանքներ տալով, վեճակովի մեջ մտել այդ ընկերության տնօրեն Ռոբերտ Առստամյանի հետ ու բռնություն գործադրելով վերջինիս նկատմամբ՝ ոտքերով և ձեռքերով հարվածներ հասցրել նրա մարմնի տարբեր մասերին՝ պատճառելով նրան առողջության թեթև քայքայումով մարմնական վնասվածք: Նրանց անօրինական գործողությունների հետևանքով ընկերությանը պատճառվել է 4000 /չորս հազար/ դրամի չափով գույքային վնաս:

Այնուհետև, շարունակելով իրենց հանցավոր գործողությունները, օգտվելով խաղասրահում տնօրենի ժամանակավոր բացակայությունից, շահադիտական դրդումներից ելնելով, ուրիշի գույքի խոշոր չափերով հափշտակում կատարելու նպատակով, նախնական համաձայնությամբ, երկուսով մուտք են գործել խաղասրահից առանձնացված օպերատորի աշխատատեղը և դրամարկղից գաղտնի հափշտակել 567000 /հինգ հարյուր վաթսունյոթ հազար/ դրամ կանխիկ գումար: Հափշտակությունը կատարելուց հետո, ամբաստանյալները դուրս գալով խաղասրահից, դրամարկղից վերցրած գումարները թաքցրել են գետնի տակ, իսկ երբ նորից վերադարձել են խաղասրահ, բռնվել են ոստիկանության աշխատակիցների կողմից:

Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը, Գերագույն դատարանը գտնում է, որ բողոքը պետք է բավարարել մասնակիորեն, հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն, եթե դատարանը, ազատագրկման ձևով պատիժ նշանակելով, հանգում է այն հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին: Պատիժը պայմանականորեն չկիրառելիս, դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

Վերաքննիչ դատարանի որոշման մեջ էրիկ Ավանեսյանի նկատմամբ կայացված դատավճռում որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ նշվել են դրական բնութագրվելը, խնամքին մեկ մանկահասակ երեխայի առկայությունը, բարձրագույն կրթություն և մշտական աշխատանք ունենալը: Իսկ մյուս ամբաստանյալի՝ Վլադիմիր Գրիգորյանի նկատմամբ, որ Արցախի Պետական Համալսարանի II-րդ կուրսի ուսանող է, բնութագրվում է դրականորեն: Երկուսն էլ երիտասարդ են, նախկինում դատված չեն, որևէ այլ արարքի համար պատասխանատվության ենթարկված չեն, ոչնչով արատավորված չեն:

Գերագույն դատարանը գտնում է, որ հանցավորների անձը բնութագրող վերը նշված տվյալները և պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները իրենց համակցությամբ բավարար չեն հանգելու այն հետևության, որ ամբաստանյալների ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու:

Պատիժը կիրառելիս հաշվի չի առնվել հանցավորների կողմից ծանր և միջին ծանրության արարքներ կատարելը, խուլիգանությունը՝ խմբով, գողությունը՝ խոշոր չափերով, շինություն մուտք գործելով և նախնական համաձայնությամբ կատարելու հանգամանքները:

Նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցը քննարկելիս, բոլոր դեպքերում պետք է բազմակողմանիորեն և օբյեկտիվ գնահատվեն քրեական պատասխանատվության և պատժի ենթարկելու համար նշանակություն ունեցող բոլոր հանգամանքները և պարտադիր նշվեն ընդունված որոշման շարժառիթները:

Ամբաստանյալների կատարած արարքներից մեկը դասվում է ծանր հանցագործությունների թվին: Դատարանը հանցավորների անձին վերաբերող տվյալների հետ միասին, պետք է պարզեր նաև ծանր հանցագործությունում նրանց ունեցած դերը, սակայն այդ հանգամանքը հաշվի չի առնվել:

Ամբաստանյալների նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելով, դատարանը խախտել է ԼՂՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածով ամրագրված արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքը, համաձայն որի, հանցանք կատարած անձանց նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխան են հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինի նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար:

Բացի դրանից, ամբաստանյալների նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելով, դատարանը անտեսել է նաև ԼՂՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածը, համաձայն որի, պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև՝ կանխել հանցագործությունները:

Նկատի ունենալով, որ նշված պայմաններում Է.Ավանեսյանի և Վ.Գրիգորյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը, չի բխում օրենքի պահանջներից, և այդ հիմքով վճռաբեկ բողոք է բերել դատախազը, Գերագույն դատարանը

գտնում է, որ վերաքննիչ դատարանի որոշումը պետք է բեկանել և գործն ուղարկել առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Ինչ վերաբերում է ամբաստանյալներին ազատագրկման ձևով պատիժ նշանակելու բողոք բերած անձի պահանջին, ապա դատարանը արձանագրում է, որ Գերագույն դատարանը նման իրավասությամբ օժտված չէ:

Հաշվի առնելով վերը նշված հիմնավորումները և ղեկավարվելով ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 421-րդ, 436-րդ, 438-440-րդ հոդվածներով, Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ԼՂՀ Գլխավոր դատախազ Ա.Ղարամյանի վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն. Էրիկ Գարիի Ավանեսյանի և Վլադիմիր Էդուարդի Գրիգորյանի նկատմամբ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010թ. հուլիսի 16-ի դատավճիռը օրինական ուժի մեջ թողնելու մասին ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2010թ. սեպտեմբերի 3-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

Ի. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝

Զ. ՕՀԱՆՅԱՆ

Գ. ԳՐԻԳՈՐՆՅԱՆ